№ 219 Դեկտեմբերի 14 (26) 1879 Դեկտեմբերի 14 (26) № 219

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թ-ին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ԱՆՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւստրօ-Ունգարիայի դրութիւնը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Երևանից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։ —Յայտարարութիւններ։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Աւստրօ-ունգարական ներքին քաղաքականութիւնն այլևս առաջուայ պէս շփոթ ու վրդովված դրութեան մէջ չէ. ազատամիտ կուսակցութեան դէակիստ կոչված խումբն ամբողջապէս յարեցաւ կառավարութեանը։

Առհասարակ պէտք է նկատած, որ ամեն անգամ երբ մի նշանաւոր ընտրութեան բուէարկութիւններ են լինում, կառավարութիւնը միշտ քառասուն, յիսուն ձայներով գերազանցում է։ Ընդդիմադրող կուսակցութեան բոլոր ջանքերն իզուր անցան. Նրանք աշխատում էին վերանորոգութիւններ մտցնել Տիսայի կաբինէտի մէջ, և այնտեղից հրաժարեցնել մի քանի մինիստրներ, որպէս զի Նրանց փոխարէն նշանակել տային այնպիսի քաղաքագէտ անձինք, որոնք վայելէին ընդդիմադրող կուսակցութեան համակրութիւնը, բայց այդ Նրանց չը յաջողեց։ Պ. Տիսա իր ճարպիկ քաղաքականութեամբ կարողացաւ բոլոր ինտրիգների առաջն առնել, և ընդդիմադրել բոլոր այն ճնշումներին, որոնց հնարել էին Նրա հակառակորդները Նրանից հանելու իրանց նպատակին։ Այսուհետև Ներկայ կաբինետին ևս ոչինչ վտանգ չէ սպառնում, և նա ոչինչ փոփոխութեան չի ենթարկվի, բացի մի դէպքից, այն է, որ Ֆինանսների մինիստր կոմս Սցապարի, որը թէրևս իր ծանր հիւանդութեան պատճառով սրտիպված կը լինի յետ քաշվել գործերից։ Այս դէպքը մեծ կորուստ կը լինէր Ներկայ կաբինէտի համար, որովհետև Նրան շատ հեշտ չէր լինի Նրա փոխարէն նշանակել մի այնպիսի անձնաւորութիւն, որի մէջ կարելի լինէր գտնել բոլոր այն յատկութիւնները, որոնք նպատակայարմար լինէին կաբինետի ձգտումներին։

Մ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

27 նոյեմբերի

Զիւն, ցուրտ, ցեխ, ահա ինչ է մեր քաղաքում։ Առևտուրը սաստիկ ընկած է, այնպէս որ մեր վաճառականները պարապութիւնից ստիպված պարապված են կամ այս և այն անձնաւորութեան, բամբասելով, կամ սրա ու նրա հարստութիւնը հաշվելով անցկացնել օրերը։

Հասարակական տեղեր չը կան. թատրոն, դասախօսութիւններ, կլուբ և այլն և այլն դրանցից ոչ մինը չը կայ, այստեղ և եթէ որ լրագիրներ չը լինէին (պարբերական հրատարակութիւններից ստացվում են այստեղ 12 տեսակ ամսագիրներ և լրագիրներ) մարդս կարող է մեռնել ապատիայի և միակերպութեան մէջ։

Այո, պատահում են յաճախ մեր փողոցների վրա ձրի տեսարաններ, որոնց մեր հետաքրքիր ախալքալաքցին չատ է սիրում։ Ասածս բռունցքի իրաւունքի վրա է որ արձակ համարձակ միշտ գործ է դրվում այստեղ։ Եւ ինչ է լինում դրա հետևանքը ջարդված քթեր, ուռած աչքեր, հաշտարար դատաստանատուն, սուտ վկայութիւն, սուտ երդումն և կրկին նոյն բանի շարունակութիւնը մշտապէս։ Ինչ վերաբերվում է գիւղացիներին, այդ խեղճերի դրութիւնը չատ անմխիթար է. մի չնչին բանի համար, կամ նոյն իսկ առանց որ և իցէ պատճառի մին էլ տեսնում ես ողորմելի գիւղացու քիթն ու պռունգը ջարթեցին. զարմանալին այն է որ մեր քաղաքացի հասկացող անուանված պարոններն ևս հեռուից լուռ հանդիսատեսներ են լինում և ոչ ոք չէ փորձում վերջ դնել այդ տեսակ խայտառակութիւններին։ Գիւղացին եթէ մինչև անգամ գանգատ էլ անէր, համարեա ոչինչ չէ շահվում, որովհետև սուտ վկայութիւնը և սուտ երդումը, որ այստեղ սովորել են անել, միանգամայն սուտ են դուրս բերում գիւղացու գանգատը։

Զարմանալի է նմանապէս մեր քաղաքացոց կողմից և մի քանի յայտնի աւազակաբարոյ անձանց ներկայութիւնը քաղաքումս համբերելը։ Այդ մի քանի անձանցը ոչ միայն հասակաւորները, այլ երեխաներն անգամ ճանաչում են. ով է Մ-ին խեղդելու փորձ արել, ով է Մ-ին կողոպտել, ով է վերջապէս բոլոր դողութիւնների հերոսը, այդ ամենքին յայտնի է, բայց ինչ անես, հայի անտարբերութիւնը, նրա «ինձ ինչը» անպատիժ են թողնում այդպիսի աւազակներին։

Զը գիտեմ յիշում են արդեօք «Մշակի» ընթերցողները անցեալ տարվայ մէջ այստեղից հաղորդած մի լուրը, որի մէջ ասուած էր թէ մի ախալքալաքեցի 4 ռուբլով առնում էր մի գիւղացուց մսի պուդը և այստեղ մսավաճառներին 3 ր. 40 կ. ծախում. այդ պարոնը հրաժարվեցաւ իր պարտաւորութիւնից գիւղացու առաջ, բայց հաշտարար դատաւորը յօգուտ գիւղացուն վճռեց այդ գործը։ Այժմ այդ խարդախ անձնաւորութիւնը, պարապ մարդ է գալիս և ձեռնարկել է մի ամենաօգտաւէտ վաճառականութեան, վաճառականութեան որ ոչ դրամագլուխ է պահանջում և ոչ առանձին աշխատանք—նա սկսել է տէր դառնալ այլոց սեպհականութիւններին և ծախել նրանց։ Գիւղացիները, որոնց վրա ծախում է նա ջրաղացի կամ շինութեան քարեր, գալիս են գնածները տանելու, բայց այդտեղ յայտնվում է քարերի իսկական տէրը և չէ թողնում տանելու և այդպիսով գիւղացու առհաւատչեան կորչում է.... Էյ՛հ զորն ասեմ, կամ զորն խոստովանիմ....

Դիֆտերիտը սկսում է մուտք գործել և այստեղ։ Նրանով հիւանդացած են 10—15 երեխաներ։ Պէտք է ասած որ հիւանդութեան հետևանքը բարի է լինում, հիւանդացածները հետզհետէ առողջանում են. այդ ախտից մեռաւ անցեալ օր միայն մի երեխայ։

Մեր պօլիցիան գործունէաբար մաքրել է տալիս փողոցները, որովհետև, ինչպէս ասում են, ձիւնը ևս վնասակար գոլորշիներ կարող է արտադրել հալվելով...։

Ամառը երբ մսավաճառների մորթած կենդանիների հոտած արեան և նրանց նոյնպէս հոտած կաշիների գարշահոտութիւնները թունաւորում էին օդը, այն ժամանակ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում առողջապահական կանոնների վրա, իսկ այժմ ձիւնը անգամ վտանգաւոր են գտնում։ Այո, մեր գործողները չեն գործում, իսկ երբ գործելու լինեն անպատճառ չափազանցութեան պէտք է հասցնեն բանը։

Շատ անգամ արդէն խօսված է որ մեր մէջ աղջիկը սեփական կամք չունի իր ամուսինը ընտրելիս, այլ պէտք է հնազանդվի հօր կամայականութեանը։ Պատահում են բացառութիւններ, որ աղջիկները ընդդիմանում են հօր ցանկութեանը և համարձակվում են այդ յայտնել (որ մեր մէջ իբրև լրբութիւն է նկատվում աղջկայ կողմից) և կամ փորձում են փախչել իրանց սիրած երիտասարդի հետ։ Այդպիսի մի անցք մօտերումս պատահել է դաւառիս Գ. գիւղում։ Մի աղջիկ սիրահարված է լինում մի երիտասարդի վրա։ Աղջկայ հայրը թէև տեղեակ է այդ բանին, բայց իր աղջկայ համար աւելի փող առնելու նպատակով նշանադրում է աղջկան մի հարուստ երիտասարդի հետ։ Անցնում է 3—4 օր նշանադրութիւնից յետոյ, աղջիկը անհետանում է։ Աղջկայ ազգականները սկսում են մանդալ սիրահարված երիտասարդի և նրա ազգականների տները և հետախուզել։ Աղջկան նոքա գտնում են երիտասարդի տանը և այդ բանում մի կնոջ կասկածելով, թէ նա է փախցրել աղջկանը, մի քանի անգամ փայտով խփում են և որովհետև այդ կինը յղի է լինում, վիժում է զաւակը....

Մի այլ երիտասարդի նոյնպէս փայտով վիրաւորել են և ասում են որ նա պառկած է անկողնում։

Այդպիսի պատահմունքներ չատ յաճախ են պատահում և նոյն իսկ մեր քաղաքում ևս մենք չատ անգամ վկայ ենք լինում թէ ինչպէս հայրը իր դուստրը փոխում է փողի հետ, ինչ փոյթ թէ օրիորդը չէ սիրում հօր ընտրած փեսայացուին։

Այո, մեր մէջ կինը ինքնասպանութիւն չէ գործում այդպիսի դէպքում, բայց նա դառնում է մի մարտիրոսուհի և նրա օրերը անցնում են անընդհատ չարչարանքների մէջ։ Վերջին ժամանակ յաճախացել են նշանադրված երիտասարդների հրաժարվելը, կամ ինչպէս մեր մէջ ասում են թողվելը։ Անցեալ ամսի 22-ին մեր քահանաներից մինը յայտնել էր ժողովրդեան, որ Վ. Կ. կաթողիկոսի հրամանով նշանադրված զոյգերը պէտք է միմեանց կողմից համաձայնութեան կապակցագիրներ ունենան, որպէս զի այդ հրաժարվելու առաջն առնվի։ Ա. այժմ մանրամասնութիւններ ինձ յայտնի չեն։

Անցեալ օր քիչ էր մնում մեր քաղաքը զոհ դնար հրդեհին։ Հրդեհը սկսվել էր սրճատանից, որի պատերը բարեբաղդաբար քարաշէն էին, այդ պատճառով կարողացան մօտակայ միւս կրպակները դատարկել և նոյն իսկ սրճատան կրակը հանգցնել տանիքը քանդելով։ Քաղաքիս միւս կրպակները փայտաշէն են և միմեանցից բաժանվում են բարակ տախտակեայ միջնորմներով։ Այժմս սկսել են շինել կրպակներ քարաշէն։ Այո, մի բաղդաւորութիւն էր, որ կրակը չը տարածվեցաւ, եթէ ոչ ինչ կարելի էր անել մի այսպիսի քաղաքում, որ ոչ հրդեհաշէջ գործիքներ ունի և ոչ քաղաքի մէջ ջուր։ Մի քանի պարոններ տխրադէմ կանգնած կրակի հանդէպ դատողութիւններ էին անում. նրանցից մինը ասում էր որ անպատճառ հարկաւոր է հրդեհաշէջ գործիքներ ունենալ, միւսը թէ ոչ միայն այդ, այլ մի ամենաանհրաժեշտ հարկաւորութիւն ևս ունենք, այն է սեպհական քաղաքային բժիշկ պէտք է ունենալ և այլն։ Բայց այդ միայն վտանգի միջոցին էր, անցաւ վտանգը, անցաւ և նրա առաջն առնելու մասին մտածելը։ Այս քանի ժամանակ է արդէն, որ մենք զգում ենք քաղաքային բժիշկ ունենալու անհրաժեշտութիւնը, այդ մասին հասարակութիւնը հաւաքվեցաւ և որոշեց բժշկի ռոճիկը, ընտրեց իր միջից մի քանի հասկացող անձանց, որպէս զի նոքա գտնեն հարկաւորեալ բժիշկը։

Եւ նոքա գտան ցանկացած բժիշկը, մի այնպիսի բժիշկ, որոնց նմանը աւելի լաւ է չունենալ։ Շնորհակալ ենք մի գործին տեղեակ մանդատ պարոնի, որի խորհրդով չընդունեցին յիշեալ բժշկին։

Անցեալ հոկտեմբերի 14-ին ընտրվեցան մեր դպրոցաց հոգաբարձուները։ Նորընտիր պարոնների վրա յոյս կայ, որ նոքա բարեխղճաբար կատարեն իրանց ստանձնած պաշտօնը։ Նրանց վրա կայ մի պարտաւորութիւն որ ամենահարկաւորն է, այն է՝ նոքա պէտք է եկող տարվայ համար. արդիւնքներ գտնեն ուսումնարանների համար, այս տարի հազիւ հազ նուիրատուութիւններով կարողացան ծախսը ծածկել, բայց եկող տարի մօտ երկու հա-

զար բուբլի աւելի փող կը հարկաւորվի ծախսի աւելորդը ծածկելու համար։

Այդ հանգամանքը մտատանջութիւնների առարկայ է, բայց պ. պ. հոգաբարձուներին յայտնի է յիշեալ գումարը, մանաւանդ որ մի քանի բարեմիտ և ազդեցութեան տէր անձինք խոստացել են իրանց ազդեցութիւնը գործ դնել և օժանդակել նրանց աշխատութեանը։ Հարկաւոր է միայն աշխատել և մենք յոյս ունենք որ նոցա աշխատանքը կը պակվի յաջողութիւնով։

Մեր ասածը Փրկչի եկեղեցու կալուածներից ստացված արդիւնքի մի մասն է, որին յատկացնելը կը բարեհաճի անշուշտ Վեհափառ Կաթողիկոսը։

Ընտրուածներն են, պ. պ. Յ. Վահրամեանց, Ն. Թորոսեանց և Կ. Մաղաքեանց։ Նոցա օգնականներ ընտրված են Ս. Ք. Դեմիրճօղլեանց, պ. Յ. Արվանեանց և Յ. Ռ. Քաջազնունի։

Մեր ուսումնարանների դրութիւնը լաւ է, թէ պարոն տեսուչը և թէ պ. պ. ուսուցիչները բարեխղճաբար աշխատում են, բայց չէ կարելի մեր հասարակութեան ներել որ նոքա երբէք չեն այցելում ուսումնարանները և ներկայ լինում դասախօսութիւններին։

Պ. Ալանվերդեանի չնորհիւ անցեալ օր մի հացկերոյթի միջոցին հաւաքված է նուիրատուութիւններ 70 բուբլի աշակերտների համար մանկական ընթերցարան բանալու։ Աշակերտների սէրը դէպի ընթերցանութիւնը մեծ է, նոքա խնդրում են ուսուցիչներից գրքեր կարդալ, որ լսեն, ուսուցիչները թէև դասերը աւարտելից ետքը կատարում են նրանց խնդիրքը, բայց մանկական գրքեր չը լինելու պատճառով հարկադրված են կարդալ Գերմենցի «Երկունք թ. դարու» և դրա նման գրքեր, որ ի հարկէ դժուար հասկանալի են մանուկներին։

* * *

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

6 դեկտեմբերի

Իմ անցեալ նամակումս ես յիշել էի, թէ մեր Դումայի ձայնաւորներից մի քանիսը հրաժարական են տուել և թէ կասկած կայ, որ նրանք հետևողներ ունենան։ Այդ տխուր երևոյթի պատճառը պէտք է բացատրել նրանով, որ այժմ մեր նորածին քաղաքային վարչութեան չնորհիւ յառաջ են եկել երկու հակառակ կուսակցութիւններ, մինը քաղաքային վարչութիւն կազմող անդամներից, իսկ միւսը մի քանի համալսարանականներից, որոնք կը ցանկանային քաղաքային վարչութեան գործերը իրանց ձեռքի տակ առնել և հետևապէս իրանք գործող լինել։ Առաջին կուսակցութիւնը, որ մինչև այժմ չի արել ոչ մի կուսակցական ոգու արտայայտութիւն, ունի իր ձայնաւորների մեծամասնութիւնը, կազմված գլխաւորապէս հարուստ հայ վաճառականներից և մուսուլմաններից։

Երբոր «Մշակի» 200 համարում տպված Երևանի նամակը դուրս եկաւ, ասում են, ժողովրդի գլխաւոր դրդողը եղաւ երկրորդ կուսակցութիւնը։ Իսկ թէ ձայնաւորները մինչև որ աստիճանի էին յուզված պ. Յ. Պ.-ի նամակի պատճառով, այդ քանը մի քանի մանրամասնութիւնների կարօտ է։ Վերջին ընտրուած անդամի կանդիդատը, որի անարժանաւորութեան մասին խօսել էր պ. Յ. Պ իր կեանքում առաջին անգամ վեր է առել «Մշակ» լրագիրը և կարդացել իրան վերաբերեալ մի քանի տողերը։—«Ախար ես ինչ եմ արել էդ Յ. Պ.-ին, որ ինձ սաղ աշխարումը խայտառակեց է՞, ախար ես ինչ եմ արել»,—խօսում է ամեն մի ծանօթի հետ պ. կանդիդատը։ Խեղճ մարդիկ, դուք կարծում էք, որ անպատճառ մէկը միւսի դէմ անձնական վրէժ պէտք է ունենայ, որ նրա պակասութիւնները յայտնի լրագրում։ o sancta simplicitas! Պարոն կանդիդատի բարկութիւնը Յ. Պ.-ի դէմ ծայրայեղութեան է հասնում։» Նրա համար աւելի լաւ կը լիներ, եթէ, ինչպէս ինքնասում է, իր որդու չլինքը կարէր Յ. Պ.-ն, քան թէ իր անունը խայտառակէր, նրա համար լաւ է՞ զրկվիլ 10 հազար բուբլուց, քան թէ տեսնել իրան խայտառակված լրագրում։ «Պարոն Յ. Պ.-ն պէտք է ասել գործավարի պաշտօն է կատարում քաղաքային վարչութեան մէջ։—«Իմ գլուխը մեռնի, եթէ ես Յ. Պ.-ին դուրս չը գցել տամ ուպրաւից», վճռում է պ. կանդիդատը և մի քանի ձայնաւորներ հաւաքելով մի գեղեցիկ օր գնում է քաղաքագլխի մօտ, որ կարմիր սեղանի մօտ նստած անդամների հետ դատելիս է լինում։ Հետեւանքը այս տեսակցութեան այն է լինում, որ քաղաքագլուխը վճռում է իր անդամների հետ հրաժարել Յ. Պ.-ին և յայտնում է այդ վճիռը նրան։

Եթէ 'ի նկատի ունենանք այն կուսակցական ոգին, որ յառաջացել է մի քանի անձնաւորութիւնների մէջ քաղաքային վարչութեան բացվելու պատճառով, եթէ յիշենք ձայնաւորների այն խօսքերը թէ «կամ մենք ամենեին ոտքներս Դումա չենք դնի, կամ հրաժարեցրէք գործավար Յ. Պ.-ին,- մենք երբէք իրաւացի չենք համարում քաղաքային վարչութիւն կազմող անձինքների որոշումը հրաժարեցնել գործավարին իր պաշտօնից և համարձակվում ենք ասել, որ մենք տեսնում ենք քաղաքագլխի և միւս անդամների այդ անցքի մէջ կը բաւարարական դեր խաղալը։ Թող իմանան թէ պ. կանդիդատը և միւս ձայնաւորները, որ Յ. Պ.-ն իրաւունք ունի քաղաքային վարչութեան կանոնադրութեան (инструкція) մի յօդուածի զօրութեամբ ներկայ գտնվել իբրև մասնաւոր մարդ թղթակից Դումայի ամեն մի նստին և յայտնել հրապարակապէս ձայնաւորների և նրանց որոշման ամեն մի պակասութեան մասին։ Այսքանս բաւական եմ համարում։

***

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

6 հոկտեմբերի

Ներկայումս մեր ամբողջ գաւառում մի չատ զգալի թանգութիւն է տիրում։ Ալիւրի անսովոր թանգութեան հետ միանալով և մնացեալ կենսական պիտոյքների բարձր գները՝ անտանելի են դարձնում մեր չքաւոր դասակարգի համար ապրուստը և դառն է մշակաց դասակարգի համար կեանքը։ Պուդը 3 բուբլիով ալիւր առնել, 16 բ. իւղ, 4 բ. բրինձ և առհասարակ ամենայն ինչ, համեմատաբար, այսպէս թանգ թանգ առնել և կերակրել մի գերդաստան և այն մի նահապետական բազմանդամ գերդաստան, հանաք մասխարութիւն չէ։ Ուտելեաց այսպիսի ծայրայեղ գները զգալի են և դրամատէրերի և արդիւնաւոր գործ ունեցողների համար,—ուր մնայ մի խեղճ արհեստաւորի կամ մի մշակի համար. մանաւանդ եթէ 'ի նկատի առնենք, որ այս տարվայ հացի ողութիւնը մի ուժգին հարուած տուց թէ մեր վաճառականութեանը, թէ մեր արհեստաւորութեանը և թէ, առհասարակ, ապրուստ մատակարարող արդիւնաբերութեան բոլոր ճիւղերին։

Մեր երկրագործների դրութիւնը էլ աւելի անհանձելի է։ Նրանց, համարձակվում եմ ասել, մեծ մասը ոչ միայն չը վաճառեցին, այլ կամ քաղաքում, կամ ուրիշ գաւառներում գնեցին այս տարի ալիւր իրանց ուտելու համար։ Ի՞նչ կը լինէր արդեօք Շարայի չատակեր որդոց դրութիւնը, եթէ այս տարի Ռուսաստանից, Երևանից և այլ մերձակայ գաւառներից չը վաճառահանէին մեղանում ալիւր։ Սրա մասին թողնում եմ պ. պ. ընթերցողներին դատել. իսկ ես շարունակում եմ խօսքս։ Մանաւանդ այս վերջին միջոցներումս գիւղացիք մի տարօրինակ բազմութեամբ թափվում են քաղաք ալիւր գնելու։ Բնութեան այս ողորմելի գերիների տնտեսական անմխիթար դրութեան վերաբերութեամբ մի ճիշտ գաղափար ստանալու համար՝ բաւական է նայել նրանց վրհատ դէմքերին, կամկոր քայլերին և պատառոտած, հնոտի հանդերձներին։ Գիւղացոց այսպէս խումբ խումբ քաղաք թափվելուն նպաստում է և մի այլ հանգամանք, որի մասին հարկաւոր եմ համարում մի թեթև ծանօթութիւն տալ «Մշակի» ընթերցողներին, նրանց, իմ այս յօդուածով, ծայրայեղ մեկնաբանութեանց առիթ չը տալու պատճառով։

Այս ամառը աճուրդով ծախվեց. թագաւորական չտեմարաններում գտնված հինաւուրց և ըստ մեծի մասին դառնացած, մօտաւորապէս, 42,000 պուդաչափ ալիւր, պուդը 1 բ. 20 կ.,—որը գնեցին միայն անձինք վաճառականական դասակարգից։ Եւ ահա, այս ալիւրը, որը գուցէ կարելի լինէր միայն անասուններին կերցնել, գիւղացիք խլում են միմեանց ձեռքից պուդը 2 բ. 40 կ. և 2 բ. 60 կ. և այս գնով առնում են նրանք, որովհետև վճարելու կանխիկ փող չունեն, որովհետև վաճառականները հաւատում են նրանց տալու. այս ալիւրը «ինխիա»։ Մի՞թէ ազնութիւն է, հարցնում ենք, այդքան չափազանցութեամբ օգտվել գիւղացու «անձեռնհաս» դրութիւնից։ Ո՞վ ծանօթ չէ մեր երկրագործների անտեսական կառավարութեան վերին աստիճանի անտեղեակութեանը. նրան ինչ ուզում ես տուր և ինչ գնով կամիս տուր, միայն փողը կանխիկ մի պահանջիր, միայն «ինխիա» տուր,—նա ուրախութեամբ կը տանի։

Այս տարի հենց աշնան սկզբից կարեկցելով մեր երկրագործների կրիտիկական դրութեանը՝ կառավարութիւնը մտածում էր մի կերպով մեղմացնել նրանց վիճակի դառնութիւնը։ Հեռատեսնելով թանգութեան և սղութեան տխուր հետեւանքները, սրանից արդէն երկու ամիս առաջ, պ. գաւառապետը անհրաժեշտ խստութեամբ հրամայեց բոլոր գիւղական տանուտէրներին՝ գրել և անյապաղ յանձնել իրան չքաւոր գիւղացիների անունների ցուցակը, որոնց, առաջիկայ գարնանամուտին թագաւորական ամբարներից ցանքի ցորեն բաժանելու թոյլտուութիւն պիտի խնդրէ բարձրագոյն իշխանութիւնից։ Մեծ պատիւ է բերում այս խոհեմ վարմունքը պ. գաւառապետին։ Եթէ կատարվի նրա հայրախնամ մտադրութիւնը, որի իրագործմանը մենք հաւատում ենք անկասկած, նա կը վայելի բոլոր գաւառի համակրութիւնը և յարգանքը։

Տեղացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Խասաֆ-իւրտ, 29 նոյեմբերի

Թէպէտ և տեղիս հայերը 10—15 հոգի են ընդամենը, բայց մի և նոյն ժամանակ յարգելով այն սուրբ ու ազգաշահ գործը, որը մեր թիւրքիաբնակ եղբայրները յանձն են առել իրագործելու սիրելի ազգիս դաստիարակութեան նպատակով, մեզանում ևս բացվեցաւ, պ. բժիշկ Կաճկաճեանցի առաջարկութեամբ, ստորագրութիւն, յօգուտ «Արարատեան ընկերութեան»։

Ժողոված 42 բուբլի փողն ընդ սմին ուղարկելով ձերդ յարգութեանը խնդրում եմ նուիրատուաց անունները զետեղել «Մշակի» մի անկիւնում, իսկ փողերն ուղարկել ուր որ հարկն է։

Բժիշկ Գէորգ Կաճկաճեանց 5 բուբլի, Գէորգ Սուլայեանց 3 բ., Գէորգ Լիսիցեանց 3 բ., Գէորգ Գրիգորեանց 5 բ., Միքայէլ Գեղամեանց 5 բ., Н. Серафимовичъ 5 բ., Ռոստոմ Մաղաթեանց 3 բ., А. Шитихинъ 3 բ., Նատալիա Լիսիցեանց 2 բ., С. Шибловская 2 բ., Е. Серафимовичъ 2. բ., վրացի Եգոր Զավախով 1 բ., Եւայ Սուլայեանց 1 բ., Մելքոմ Մակարեանց 1 բ., М. Чекуновъ 1 բ։ Ընդամենը 42 բուբլի։

Գ. Սուլայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Դեկտեմբերի 12-ին ԹԻՖԼԻՍԻ ցիրկի մէջ ներկայացումն կար յօգուտ մեր քաղաքի «Կենդանիների հովանաւորութեան ընկերութեան» բժշկանոցի։ Ցիրկը կատարելապէս լի էր։

—

ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են, որ այնտեղի երիտասարդները մտադիր են մի մատենադարան կազմել որտեղ կը ստացվեն ամեն տեսակ լրագիրներ և պարբերական հրատարակութիւններ։ Ասում են, որ տեղացի ընակիչների մեծ մասը մի առանձին համակրութիւն չէ ցոյց տալիս դէպի այդ ճշմարիտ օգտաւէտ գործը։ Աջողութիւն ենք ցանկանում երիտասարդների այդ բարի դիտաւորութեանը։

—

Շաբաթ օր, դեկտեմբերի 15-ին Արծրունու թատրոնում ռուս սիրողները պ. Բէրիձէի առաջնորդութեամբ տալու են մի ներկայացումն։ Խաղալու են «Трудовой хлѣбъ» Օստրովսկու և մի վոդեվիլ։ Անտրակտներում կածի պ. Վետոշնիկովի օրկէստրը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Վադդինգտոնի նշանաւոր ճառից յետոյ, հանրապետական զանազան խմբեր ներկայացրին պարլամէնտին մի պրոգրամմա, որի մէջ նրանք պահանջում են, որ ժողովրդական այլ և այլ ծառայութիւնների մէջ կարգ և ներդաշնակութիւն մտցնվի, և ազգու միջոցներ գործադրվեն, որպէս զի պետութեան բոլոր այդ վարչութիւնները հնազանդվեն հանրապետութեանը, և յարգանօք վերաբերվեն դէպի հանրապետութեան ռամկապետական օրէնքները։ բացի այս նրանք պահանջում են որ վերջ դրվի կայսրութեան հրովարտակների և կայսրութեան ժամանակվայ հրատարակված օրէնքների գործադրութեանը, և մի ընդարձակ քուէարկութեան ենթարկել մամուլի ազատութեան հարցը։ սրանից յետոյ նրանք պահանջում են, որ ընկերութիւնների (association) և ժողովների ազատութեան համար մի ընդհանուր և մշտական օրէնք հրատարակվի և դատաստանական վարչութեան մէջ վերանորոգութիւններ մտցնվին, և մի նոր օրէնք հրատարակվի,որի զօրութեամբ կարելի լինի վերջ տալ դատաստանական մշտական անդամների գոյութեանը, բացի այս ձախակողմեաններն իրանց պրոգրամմայի մէջ պահանջում են, որ ամենաազդու միջոցներ գործ դրվեն և ներկայ գոյութիւն ունեցող օրէնքների գործադրութիւնը խստութեամբ և ճշդութեամբ իրագործեն, և կղերականներին ստիպեն, որ նրանք յարգանքով վերաբերվեն դէպի հանրապետական վարչութիւնը, որին նրանք խոստացել են հաւատարիմ պաշտօնեաներ լինել։ բացի այս նրանք պահանջում են, որ տարրական ուսումն աւանդվի երեսուն երեք անդամներից բաղկացած յանձնաժողովի ծրագրով, որը վճռել է, որ տարրական ուսումը աշխարհական, ձրի և պարտաւորեցուցիչ լինի, և անպատճառ պահպանվի 1850-ի Ֆալլուի օրէնքի վերանորոգութեան կանոնները, որոնց զօրութեամբ պետական որ և է հիմնարկութեան մէջ պաշտօն ստանալու համար, հարկաւոր է անշուշտ մի որոշեալ քննութեան ենթարկվել, որ պարտաւորեցուցիչ կը լինի ամեն դասակարգի մարդոց համար։ Բացի այս պրոգրամմայի զօրութեամբ պէտք է աւելացնել բոլոր ուսումնարանական հիմնարկութիւնների մէջ կառավարութենից նշանակված օժանդակութիւնը, և վարժարանների և լիցէների մէջ վճարի նշանաւոր զիջումներ պէտք է լինեն, բացի այս պէտք է աշխատել, որ զինուորագրութեան մէջ ևս վերանորոգութիւններ մտցնել, որոնց զօրութեամբ կարելի կը լինի զինուորական։ Ծառայութեան տևողութիւնը երեք տարի շինել, և բոլորովին արգելք դնել կամաւոր զինուորագրութեան, բացի այս նրանք կամենում որ քաղաքային իշխանութիւնն իրաւունք ունենայ միջամտել ժանդարմերիի կազմակերպութեան և նրա վարչութեան մէջ. վերջապէս ձախակողմեաններն իրանց առաջարկած պրոգրամմայով կառավարութենից պահանջում են, որ նա հարկերի մէջ զիջումներ անի և երկաթուղու գների մէջ էլ նոր վերանորոգութիւններ անի։

Անցեալ օրերս Փարիզին այցելեց մի թագաւորական հիւր. Անգլիայի թագուհու չորրորդ որդի Լէօպոլդ իշխանը մտաւ Փարիզ. Փարիզի անգլիական դեսպան լորդ Լիոնը կառքով գնաց երկաթուղու կայարանը և ընդունեց իշխանին, և յետոյ երկուսը միասին գընացին Էլիսեան պալատը պ. Գրէվիին այցելելու։ Մի և նոյն օրը ճաշից յետոյ ժամը երկուսին հանրապետութեան նախագահը զեներալ Պիտաիէի ուղեկցութեամբ գնաց Բրիստոլեան հիւրանոցը փոխադարձաբար այցելելու. նորեկ հիւրին. նախագահի այցելութենից մի քանի րոպէ յետոյ, լորդ Լիոն կառքով եկաւ իշխանի մօտ և առաջնորդեց նրան Բուրբոնեան պալատը, ուր նա ներկայ գտնվեցաւ ազգային ժողովի նստին, որին նախագահում էր հանրապետութեան նախագահը։ Երեկոյեան իշխանին ներկայացան բրիտանական գաղթականութեան մի քանի նշանաւոր անդամներ։ Իշխանը մի քանի օրից յետոյ կրկին կը վերադառնայ Անգլիա։

Անցեալ նիստերից մէկում մինիստրների խորհրդարանը պ. Տիրարի միջոցով տեղեկութիւն ստացաւ Ալժիրի անասնաբուժական ուսումնարանի դրութեան մասին: Խորհրդարանն խսկոյն վճռեց, որ աշակերտների յարուցրած խռովութեան պատճառով, ուսումնարանը փակվի:

Պ. Բուէ, որ Ֆրանսիայի գահաժառանգ իշխանի մահից յետոյ, գեռ չէր եկել պատգամաւորների ժողովը, դեկտեմբերի երեքին, ներկայ էր նստին:

Դեկտեմբերի երեքին Փարիզում առաջին անգամ լոյս տեսաւ ռամկապետական մի նոր լրագրի առաջին համարը. լրագրի անունն է «En Avant:» Այդ լրագիրը կայսերականների օրգան է, և նրա գլխաւոր խմբագիրը պ. Պըլրոն է, որը նապոլէոնեան խնդրի ամենաջերմ պաշտպաններից մէկն է:

Նոյեմբերի 30-ին, կիրակի օրը, Մարսէլիայում Գաստոն—Կրէմիէօի մահուան տարեդարձի օրը, մի քանի անձինք խմբովին գնացին իսրայէլացոց գերեզմանատունը, և սպանվածի գերեզմանի վրա ծաղկէ պսակ դրին. հանգուցեալը կոմիւնալիստ է, որին 1871-ին հրացանի բռնեցին: Այդ օրը ոչինչ խռովական ցոյցեր չեղան: Փարիզի շրջակայքում գտնվող Սէն-Դընի քաղաքում մի քստմնելի անցք է պատահել. 14 տարեկան մի փոքրիկ աղջիկ, որի ծնողները հայ են, և բնակվում են յիշեալ քաղաքի Կոմպուազ անունով փողոցում, բէվօլվէրով անձնասպանութիւն է գործել այն աշխարհական ուսումնարանում, ուր նա յաճախում էր. անձնասպանութիւնը կատարվել է ճաշից յետոյ ժամը մէկին. հարուածից իսկոյն և եթ մեռել է աղջիկը:

Լրագիրները պատմում են, որ վեց ամիս սրանից առաջ Ֆրանսիայի Ուազ կոչված նահանգում մի սարսափելի եղեռնագործութիւն է պատահել. Ալբէրտին-Մայէ անունով տասն ինը տարեկան մի երիտասարդ աղջիկ յանկարծ անհետանում է. մի քանի օրից յետոյ նրան գտնում են խեղդված Սէն-Ֆիրմէն գիւղի սահմանի վրա մի փայտաշէն խանութում: Դիակը ենթարկված էր ամենադարշելի անպատուութիւնների:

Այս յանցանքն այդ կողմերը սաստիկ վշտպատճառեց: Եւ յիրաւի, Ալբէրտինը մեծ սէր ու մեծ յարգանք էր վայելում ամենքից: Նա իր ծնողների հետ միասին բնակվում էր Վիլ-Նէօյլ աւանում, և ամեն առաւօտ գնում էր Սէն-Ֆիրմէն Պէզէ-Դէլի անունով մի տիկնոջ տուն, ուր նա աշխատում էր լուացված շապիկներ նշշտելով:

Աւելի քիչ ծախսելու համար և տունն էլ մօտ լինելով, նա ամեն օր գնում էր իր ծնողների մօտ ճաշելու. յանկարծ մի երկուշաբթի նա ոչ նախաճաշի երևաց և ոչ էլ ճաշի. այդ դէպքը մեծ անհանգստութիւն պատճառեց երիտասարդ աղջկայ ծնողներին. ամենքն սկսեցին այս կողմ այն կողմ որոնել. նրա ծնողները և բարեկամները պոլիցիան օգնութեամբ ամբողջ գիշերը ջահերով որոնում էին նրան.—անօգուտ, և միայն մի քանի օրից յետոյ մի կին խոտ հնձելու ժամանակ գտաւ դիակը, որին խեղդել էին նրա վզի թաշկինակով:

Մի անձնաւորութիւն, որին նկատելէին, որ նա մի քանի անգամ փորձել էր խօսել ամբաստ զոհի հետ, և որից խեղճ աղջիկը միշտ փախչելիս է եղել, ցոյց տրվեցաւ իբրև եղեռնագործութեան պատճառ: Նրան հարց ու փորձ արին, բայց նա այնպիսի վկայութիւններ ներկայացրեց, որոնք ապացուցանում էին, որ յանցանքը գործած բոպէին նա իր տանն էր. սրանից յետոյ, իշխանութիւնը նրան արձակեց:

Բայց այս վերջին օրերս մի կին, որ վերոյիշեալ անձնաւորութեան անմեղութիւնն ապացուցանող ամենագլխաւոր վկաներից մէկն էր, մի կռիւ ունեցաւ այն պարոնի հետ, և սաստիկ բարկութեան ժամանակ բացականչեց:

—Ա՛խ, այդպէս է ուրեմն, շատ բարի, ես այժմ կը գնամ ու ամեն բան կը մատնեմ:

Այս խօսքերը հասան ոստիկանութեան ականջին և ժանդարմերին սկսեց նրան հարցուփորձեր անել: Նա մերժեց պատասխանել, բայց երբ նրան կալանաւորեցին և տարան Սանլիս, (բերդի անունը) նա յայտնեց, որ առաջին անգամը նա սուտ էր վկայել, և որ եղեռնագործը հէնց նա էր, որին առաջին անգամ կասկածել էին:

Այդ անձը, որ մեղապարտ է ճանաչվում այդ քստմնելի ոճրագործութեան մէջ, մի պարոն է վաթսուն տարեկան Դ.... անունով, որը Վինէօյի մէջ մի շքեղ կալուածք ունի, և տմուսնացած ու որդոց տէր մարդ է: Նա կալանաւորվեցաւ և մատնվեցաւ Սանլիսի բանտին:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 1 դեկտ.

Կապոյտ տետրը կը շարունակէ ընդհանրութեան ուշադրութիւնը գրաւել. մեր թերթերը հայոց վերաբերեալ հատուածներն թարգմանելով կը ծանօթացնեն ժողովուրդեան, իրենց կողմէ բաւական լաւ խորհրդածութիւններ և կծու ակնարկներ անելով: Կարծեմ քիչ օրէն ձեզ խրկած կարմիր տետրիս Դ. հատորն ալ կը հրատարակուի, դա մի հերքում է կապոյտի հայոց նկատմամբ սխալ և աննպաստ նամակաց: Արդէն Վ.ահան վարդապետ Հայաստանի վիճակի վրայ կարևոր գրութիւն մը յանձնած էր Թրօթթրի. այդ գրութեան մէջ ապացոյցներով վարդապետը կը հաստատէ թէ ինչպէս օսմանեան կառավարութիւնը սիսթէմաթիքական եղանակաւ Հայաստանի մէջ հայոց ոչնչացմանը հետամուտ է: Այդ գրութիւնը առ այժմ հոս չը պիտի հրատարակուի, թերևս Տփխիս տպուի. համառօտութիւնը գրելու հարկ մը չեմ տեսներ. արդէն պ. Արգամ քիչ մը աւելի ընդարձակօրէն կը գրէ սօսր Նիւթիս վրայ:

Կը զարմանամք թէ ինչու Վ.ահան վարդապետը յանկարծ Պոլիս բերին. կարծոյ մէջ շատ կարևոր դեր մը խաղաց և մեծապէս օգտակար եղաւ. քօմիսէրներն լաւ ճանչցաւ, գիտցաւ թէ ինչպէս վարուելու է անոնց հետ, Մուշոյ և Վանայ մէջ գործելու համար նախնական պատրաստութիւններն տեսաւ և կը պատրաստուէր քօմիսէրներու հետ ճամբայ ելնել դէպի Վան, երբ քաղաքավար կերպով մը պաշտօնական եղաւ: Կերևի թէ ինքնապաշտպանութեան գաղափարին քիչ մը շատ սիրահար է, և թէ մեր Պատրիարքարանը այս մասին այդքան եռանդէ չախորժիր. Վ.ահան վարդապետի այս միջոցիս Վան չերթալը լաւ չեղաւ: Ո՞ւր էր թէ Տիգրանակերտ ալ կարնոյ հետևէր և առաջնորդ ու պատուիրակ մէկ մէկու ձեռք տալով աղգի շահերը պաշտպանէին: Գարեգին վարդապետի աղգասիրական զգացմանցը վրայ տարակոյս չը կայ, Փիլիպպոս եպիսկոպոս մի յարգելի և ճարտար անձ է, զարմանալի է թէ ինչպէս իրարու հետ չը համաձայնեցան: Փիլիպպոս եպիսկոպոս այսօր Կ. Պոլիս թափառական է. Տիգրանակերտի ժողովուրդի մեծ մասը, կրնամ ասել գրեթէ ամբողջութիւնը, գնա կուզէ. մեր թերթերն կը հաստատեն թէ ինչպէս անհրաժեշտ է նորա ներկայութիւնը ի Տիգրանակերտ: Պատրիարքը արդէն գնա ի Կ. Պոլիս բերելու հակառակ էր. և սակայն այսօր դժուար կը լինի գնա վերադարձնել. այդ դժուարութիւնը կառավարութեան կողմէ է. կառավարութիւնը արդէն Փիլիպպոսի հակառակ է և քանիցս Պատրիարքարանէն նորա պաշտօնանկութիւնը պահանջած էր: Փիլիպպոս եպիսկոպոսի գլխաւոր ճարտարութիւնը եղած է Տիգրանակերտի բոլոր քրիստոնեաներն իւր շուրջը բոլորել և միասին թրքաց դէմ մաքառել: Անցեալ յունվարի Տիգրանակերտի քրիստոնէից առաջնորդաց ստորագրութեամբը հեռագիր մը կը հաղորդէր դեսպանաց թրքաց կողմէ իրենց կրած տառապանաց նկատմամբ և Ֆուռնիէ կասէր թէ «Հայոց առաջնորդի գրածներուն համար սուտ է կասէ Դուռը, միթէ բոլոր Առաջնորդներն ալ սուտ կը խօսին.» Կարծեմք թէ Դուռը բնաւ հրաման չը տայ այս կարևոր անձի վերադարձին և այս դաս մը ըլլայ աղգային գործոց մէջ թեթևութեամբ յախուռն կերպով շարժողներուն:

Սրուանձտեանց ալ Տիգրանակերտ չէ, Ակն էր, Պատրիարքարանէն հրաման ընդունեցաւ առ այժմ խարբերդու առաջնորդական տեղապահ լինել, ելեր գացեր է, բայց կերևի թէ լաւ ընդունելութիւն չէ գտած. հոս ալ անձնական կիրքերն ազգային շահերը ոտնակոխ կրնեն: Սրուանձտեանց վարպետ մարդ է և խարբերդցւոց իրենց կարծածէն աւելի ծառայութիւն կրնայ մատուցանել, վախեմք թէ Ակն վերադառնայ:

Խրիմեան Վ.ան հասած լինելու է. քօմիսէրք ևս այժմ հոն լինելու են, սակայն կիսմանամք թէ վանեցիք որոշած են ամենևին բարեկարգութեանց ծրագիր մը չը ներկայացնել ասոնց. պիտի հարցնեն թէ ինչ գործ տեսաք ի Կարին որ հոս ալ գործ մը տեսնէք, ինչ պատասխան տուիք կարնեցւոց տեղեկագրերուն: Եթէ վանեցիք դայս ընեն շատ գործնական պատասխան մը տուած պիտի լինին և պիտի ցցնեն թէ իրենք յանձնաժողովներէ չեն խաբուիր: Բայց միւս կողմէ կարծողներ ալ կան որ շատ վատ չը լինիր եթէ իրենք ալ տեղական ինքնավարութեան ծրագիր մը ներկայացնեն, որով հայոց պահանջներն աւելի ակներև կը լինին: Քօմիսէրներն հեռագիր մը կընեն Դրան թէ խնուսի հարստահարութիւններն հին բան են, Մուշոյ մէջ եղած չարագործաց քննութիւնը ի կարին տեղի կունենայ:

Պէյքըր բաշայէն լուր մը չը կայ դեռ. «Դէյլի-Նեուզ» ալ կը կարծէ թէ բարեկարգութիւններն ուշացնելու միջոց մ'է Պէյքըր բաշայի այս տեսակ պաշտօն մը յանձնուիլը:

Հայաստանէն եկած լուրերն ամենևին մխիթարական չեն: Կարծեմք թէ Պատրիարքը Բ. Դրան հետ այնքան լաւ յարաբերութիւն մը չունի: Սակայն բաշա միշտ քրիստոնէից հակառակորդ է, հայ, Հայաստան բառերէ կը խորշի. Պատրիարքը ինքնավարութեան գրաւոր ծրագիր մը չէ յանձնած Բ. Դրան, ընդունելութեան յոյս չունենալով, միայն բերանացի դիտողութիւններ ըրած է. սակայն Բ. Դուռն ալ ամեն միջոց ի գործ կը դնէ Պատրիարքի հեղինակութիւնը և ազդեցութիւնը տկարացնելու, տակաւին յաջողութիւն չունեցաւ:

Ի սկզբանէ անտի օրէնք է որ կալուածական խնդրոց մէջ ամեն պատրիարքարան իւր իրաւասութեան ներքև գտնուող անհատները կը ծանօթացնէ Բ. Դրան, վաւերագիր մը տալով զոր կը կնքէ Պատրիարքը. այժմ կառավարութիւնը կը պահանջէ որ Պատրիարքի կնիքի մօտ տաճիկ իմամներու կնիքն ալ գտնուի. սակայն այսպիսի պահանջ մը ընդունելութիւն չը կրնար գտնել մեր Պատրիարքարանը սաստկապէս բողոքեց, և ապահովապէս իւր ուզածին պէս լինի. չեմք կրնար ըմբռնել թէ ինչպէս տաճիկներն կելլեն այսպիսի յիմար առաջարկութիւններ կընեն:

Իսկ միւս կողմէ դեսպանատանց հետ Պատրիարքի յարաբերութիւններն լաւագոյն են. Ռուսիոյ կայսեր դէմ եղած դաւադրութիւնը ի դերև ելլելուն համար Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան մատրան մէջ Te Deum մը երգուեցաւ. ամեն դեսպանք հրաւիրեալ էին: Պ. Օնու հրաւիրագիր մը ևս մեր Պատրիարքի գրեց, որ փութաց ներկայ գտնուիլ այս հանդիսի. նշանակութեան արժանի է որ մինչ պ. Օնու իւր սրահին մէջ կընդունէր Յունաց Երուսաղէմայ Պատրիարքը, մինչև դուռն ընդ առաջ եկաւ Ներսէսի. Օնու Պատրիարքի ձեռքն համբուրեց և Պատրիարքը նորա ճակատն: Դեսպանատան միջոցաւ Պատրիարքը հետևեալ ֆրանսերէն հեռագիրն ուղղեց առ կայսրն ռուսաց:

A Sa Majesté L'empereur de toutes les Russies.

Sire, quil me soit permis de répendre mes felicitations chaleureuses et celles de tous les arméniens de Turquie aux pieds de Votre Majesté impériale, qui vient déchapper si heureusement au plus horrible des attentats.

Benie-soit la divine providence qui dans ses impénétrables desseins a conservé et conservera longtemps les précieux jours d'un monarque si magnanime, gloire de Son illustre patrie et espoir du christianisme souffrant.

(Ստորագրեալ) Le patriarche des arméniens de Turquie Nerses.

«Սթամպուլ» կը հաղորդէ թէ Բ. Դուռը պաշտօնապէս Պատրիարքարանի կարծիքը հարցուցեր է Հայաստանի բարենորոգմանց համար. այս լուրը անհիմն է:

Հասուն գերապայծառը Սուլթանին պիտի ներկայանար արտաքոյ կարգի փառաւոր կերպով, պալատէն խրկած կառքեր պիտի ընդունէին զինքն, սակայն յետոյ այս որոշումը ետ առնուեցաւ. կերևի թէ պաշտօնէից ժողովոյ մէջ դիտողութիւն եղեր է թէ սովորութիւն կը լինի այսուհետև ամեն պատրիարք այնպէս արտաքոյ կարգի փառաւորութեամբ պալատ երթայ. այս դիտողութեան վրա առ այժմ գերապայծառը չը գնաց Սուլթանին, կըսուի թէ այսօր պիտի երթայ:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. Գ. Դ. Պ. Նամակը տպագրութեան համար յարմար չէ: Իւրաքանչիւր մարդ փոքր ի շատէ շողոքորթում է: Եթէ տեղացի վաճառականները չեն ցանկանում հայր սուրբի նման մի քարոզիչ ունենալ, այդ չէ նշանակում որ տեղացի տիկիններն էլ չեն ցանկանում, իսկ թղթակիցը այս վերջինների ցանկութեան մասին էր գրել:

—ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Գ. Մ. Նամակները չենք տպի: Մեծ աշխատանք է հարկաւոր նրանց ուղղելու համար: Պէտք է բոլորը նորից գրել:

—ԱԽԱԼՑԽԱ. ***. Միթէ այդ երկու հարցերից աւելի ուրիշ ոչինչ հետաքրքիր բան չը կայ ձեր քաղաքում: Թէ դուք և թէ մեր միւս թղթակիցները, որոնք առհասարակ անմաքուր են գրում, մանաւանդ ազգանունները, մեզ ինկվիզիցիայի չարչարանքների է ենթարկում: Երևակայեցէք 30-ի չափ ազգանուններ մի նամակի մէջ, բոլորն էլ խառնշտորած, միմեանց վրա գրված և այդ բոլորը պէտք է կարդալ, հասկանալ: Ձենք կարծում, որ հայերը որոնք հիմա էլ շատ քիչ են գրվում «Մշակին», միջոց տան մեզ մարդիկ վարձել, եթէ ոչ բոլորովին կը կուրանանք:

—ԵՐԵՒԱՆ. Մ. Մ. Երևանում մենք արդէն ունենք թղթակիցներ, բայց այնու ամենայնիւ շարունակեցէք գրել. յարմար նամակները կը տպենք: Այս նամակը տպագրութեան համար անյարմար է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 դեկտեմբերի: «Правит. Вѣстн.» լրագիրը Կայսրուհու առողջութեան մասին հաղորդում է հետևեալ տեղեկութիւնը, «Կանն, 9 դեկտեմբերի: Կայսրուհին երէկվանից պակաս բաւականացուցիչ անցկացրեց գիշերը. ցերեկվայ ընթացքում հազը թոյլ է, իսկ գիշերն աւելանում է. կրծքի ցաւը նուազ է. տենդը հետզհետէ նուազում է:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 դեկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 93 ր., երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 230 ր. 25 կ., երկրորդ 250 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ $89^{7}/_{8}$ ր., երկրորդ $89^{7}/_{8}$ ր., ոսկի 7 ր. 88 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $25^{1}/_{16}$ պէնս. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 213 մարկ, Փարիզի վրա 263 ֆրանկ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է Կայսրուհու առողջութեան մասին հետևեալ տեղեկութիւնը, որը ստորագրված է Ալիշեվսկի և Բոտկին բժշկապետներով, «Կանն, 10 դեկտեմբերի: Կայսրուհին գիշերը վատ քնեց հազի պատճառով, որ սկսեց ժամը չորսից. երէկ երեկոյեան և այսօր առաւօտ տաքութեան աստիճանը 38 է, իսկ երակի զարկը 120. առաւօտը նա դանգատվում էր, որ շնչառութիւնը ծանր էր, սրա հետ միասին զգում էր սրտի բաբախիւն: Պլէվրիտական ցաւն անհետացաւ, սրտի խառնոցը պակասեց:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПОСТУПИЛИ ВЪ ПРОДАЖУ СЛѢДУЮЩІЯ КНИГИ:

Домашній Общедоступный вкусный столъ настольная книга для молодыхъ хозяекъ, содержащія въ себѣ 370 обѣдовъ и употребительныхъ блюдъ съ подробнымъ алфавитныхъ указателемъ на каждый день, составила Н. Кололитцева ц. 2 р. 50 к. съ пересылк.

Руководство Кройки Шитью женскаго платья для самообученія по вновь изобрѣтенной весьма простой и вѣрной системѣ съ 18-ю рисунками и многими чертежами, ц. 1 р. 50 к. съ пересылк.

Новый Способъ Рисованія посредствомъ котораго всякій, даже неимѣющій понятія о рисованіи можетъ весьма легко, безъ всякій предварительной подготовки снимать копіи съ рисунковъ, картинъ, фотографическихъ карточекъ, гравюръ, портретовъ, и проч; совершенно сходныя съ оригиналомъ съ приложеніемъ Новаго Способа умноженія, который изучается въ 5 минутъ безъ помощи учителя великолѣпномъ кортонажѣ съ приборомъ и объясненіемъ, издан. 2-е, ц. 3 р., съ пересылкой

Практическія Врачебныя Наставленія Вступившимъ въ бракъ, содержащія въ себѣ правила физическихъ способностей въ брачной жизни до глубокой старости съ присовокупленіемъ описанія половой жизни женщины, сочиненіе доктора медицины Р. Фернау, издан. 4-е съ рисункам. ц. 1 р. 50 к. съ пересылкой.

О Зачатіи и Зарожденіи Младенцевъ, объ укрѣпленіи ослабѣвшихъ мужскихъ членовъ и объ илеченіи отъ онанизма какъ мужчинъ такъ и женщинъ, сочинен. полѣзное и понятное для всякаго, кто только желаетъ вполнѣ постигнуть эти важные предметы, сочиненіе доктора медицины и профессора Парижскаго университета Мореля де Рюбомира, издан, 3-е ц. 1 р. 50 к.

Сладострастіе и Истощеніе общедоступное изложеніе свѣхъ средствъ для совершеннаго излеченія венерической болѣзни во всѣхъ ея видахъ и проявленіяхъ, возстановленіе плодородія, леченіе безсилія и безплодія, возрожденіе утраченныхъ физическихъ силъ съ присовокупленіемъ рецептовъ лекарства для домашняго приготовленія, составилъ докторъ медицины и профессоръ П. Сорокинъ ц. 3 р. съ пересылкой.

Объ Онанизмѣ и Безсиліи, о средствахъ снова возстановлять и укрѣплять здоровье разстроенное онанизмомъ и безсиліемъ. сочиненіе доктора медицины А. Брауна, издан. 2-е, ц. 1 р. 50 к. съ пересылкой.

„Геморрой“. Коренное уничтоженіе болѣзни во всѣхъ ея видахъ и проявленіяхъ, новыя медицинскія средства доктора медицины К. Лебеля, издан. 2-е ц. 1 р. 50 к. съ пересылк.

Ремесленная книга содержащія въ себѣ слѣдующія ремесла и искуства для самообученія: портное мастерство, II. Сапожное мастерство, III. Столярное искусство, IV. Плотничное искусство, V. Токарное мастерство, VI. Механическое слесарное мастерство, VII. Переплетное и футлярное мастерство, съ 276 рисунками ц. 3 р.

Фотокоператель. Домашній фотографическій аппаратъ для копераванія дома всякихъ фотографическихъ карточекъ, гравюръ, портретовъ, картинъ и проч; совершенно сходныхъ съ оригиналомъ съ приложеніемъ наставленія и фотограф. карточ. ц. 4 р. съ пересылк.

Опредѣленіе жизни, сочиненія доктора медицины и профессора Клодъ Бернара, перед. франц. Д. Корша, ц. 50 к. съ пересылк.

Новыя гадательныя карты знаменитой предсказательницы дѣвицы Ленорманъ, въ роскошной сюрпризной коробкѣ, ц. 1 р. 50 к.

Половое отправленіе человѣка. Анатомическое описаніе дѣтородныхъ органовъ и родовыхъ частей; физіологія половой жизни, зачатія и зарожденія; краткое изложеніе сущности сифилитической болѣзни и послѣдніе выводы о средствахъ могущихъ предупреждать всякое зарожденіе, сочиненіе доктора медицины К. Реута, съ 24 рисунками, ц. 2 р. съ пересылк.

О физическихъ Супружескихъ отношеніяхъ мужчины и женщины съ показаніемъ наставленій какъ мужъ и жена должны вести себя въ этомъ случаѣ безъ вреда своему здоровью, сочиненіе доктора медицины А. Брауна, ц. 2 р. съ пересылкою.

Картины Послѣдствій Разврата или разрушительное вліяніе природы на людей предающихся любострастію, настольная книга для всякаго съ показаніемъ способовъ леченія болѣзней съ 12-тою картинами, издан. 2-е, сочиненіе доктора А. Лашерта, ц. 2 р. съ пересылк.

Лечебная книга тысяча новыхъ случайнихъ открытій исцѣленія хроническихъ и другихъ болѣзней съ присовокупленіемъ рсцептовъ лекарствъ для домашняго приготовленія, сочиненіе доктора медицины Ф. Ильинскаго, ц. 3 р. съ пересылк.

Практическій Ветеринарный Врачъ леченіе коровъ, лошадей, козъ, овецъ, собакъ, свиней и домашныхъ птицъ съ присовокупленіемъ конскаго знатока, составилъ профессоръ ветеринаріи Фишеръ въ зчаст. издан. 2-е ц. 3 р. съ пересылк.

Трактатъ о Зубахъ съ наставленіемъ относительно предохраненія возставленія и леченія ихъ, сост. дантисъ Декилъ ц. 50 к.

Съ Требованіями Гг. иногородные благоволять обращаться исключительно на имя *Христофора Ивановича Петрова, С.-Петербургъ* Фонтанка, близь Англійскаго проспекта, домъ № 143, кв. № 16.

ՀԻՆԵՐԻ ՌԻՖԼԸՄՕՆ

Նորին Կայսերական Բարձրութեան զեներալ ֆէլդմարշալ կովկասեան **ՓՈԽԱՐՔԱՅԻ** պարիկմախերը պատիւ ունի յայտնել, որ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ պատճառով, նրա ՄԱԳԱԶԻՆԸ դեկտեմբերի 1-ից, փոխադրված է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված զեներալ ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը Անգլիական կլուբի ներքևը:

2—5

Շաբաթ, դեկտեմբերի 8-ին, աղնուական Իվան Իվանիչ ՖՕՆ-ՇԱԴԷՆ հաւատարմատար Իոսիֆ Դավիդովիչ ԲԱԿՐԱՁԷ ԿՈՐՅՈՒԼ Է ԴՕԿՈՒՄԵՆՏՆԵՐ. կալուածագիր (купчая крѣпость), Վլօշնի լիստ և վեց վկայագրեր, որոնք զանազան պաշտօնատեղերից են տրված: Պ. Բակրաձէ խոնարհաբար ԽՆԴՐՈՒՄ է գտնողից կամ ՀԱՅՏՆԵԼ «Մշակի» խմբագրատունը, կամ պ. Բակրաձէի բնակարանը, որ գտնվում է Մալայա-Վօդվօդնայա փողոցի վրա, Կալինինի № 5 տանը:

1—5

Կարելի է գտնել պ. Էդուարդ ԿԻՆՆԵԺԷԼԻ մօտ, աղնուականների կալուածական բանկի տակ, Սօլօլակում, Կորգանովի տանը առաջին տեսակի դեղին գոյնի ՇԵՐԱՄԻ կօկօնների ՍԵՐՄԵՐԸ, Պատէրի սիստեմայի:

1—3

Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՃ.
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝

1) Մամուլի տակ ընկաւ և 1880 թ. յունվարին լոյս կը տեսնի՝ ԴՈՒԿԱՍԵԱՆՑԻ—ընդհանուր պատմութեան հին դարը—ա. մն:

2) Շուտով մամուլի տակ կընկնի Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ աշխատասիրութեամբ և հրատարակութեամբ Մարդակազմութիւն՝ մարդուս մարմինը, նորա կեանքը և խնամատարութիւնը-անունով պատկերազարդ գիրը:

3) Մամուլի տակից դուրս է եկել և արդէն վաճառվում է «ԾԵՐԵՆՑԻ-Երկունք 9-դ դարու» պատմական վէպը, որոյ գինն ամէն տեղ մի բուբլի է:

Նոյն տեղը ստացուել է Բոստովի (պ. ՏԷՐ-ԱԲՐԱՄԵԱՆԻ) օրացոյցը, երկու պատկերներով զարդարուած. գինն է 15 կ.:

5—10

Отъ администраціи газеты „ТРУДЪ“

1 номеръ политико-литературной газеты „Трудъ“, согласно печатно заявленному обѣщанію администраціи, имѣетъ выидти на дняхъ. Прошу мѣстную прессу перепечатать это объявленіе

«Աշխատանք» անուն քաղաքագիտական գրականական շաբաթաթերթի առաջին համարը, համաձայն խմբագրութեան յայտարարութեան, դուրս է գալու այս մի քանի օրից յետո:

ԱՌԱՋԻԿԱՅ 1880 ԹԻՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից, իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամէն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԻՒՂԱՐՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» ապագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

„ՓՈՐՁ“

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

1880 թ.

(Չորրորդ տարի)

Չորրորդ շրջանի մէջ ևս «ՓՈՐՁԸ» կը հրատարակուի մի և նոյն հոգւով և ուղղութեամբ և նոյն ծրագրի համեմատ ինչպէս և առաջին երեք տարիները:

Հանդէսը լոյս տեսնում ամսէ ամիս:

Իւրաքանչիւր համարի տպագրական թերթերի թիւը լինելու է 12-ից մինչև 15. Ամբողջ տարին կազմում է չորս մեծադիր հատոր, ամեն մէկը աւելի քան 600-700 երեսից բաղկացած:

«ՓՈՐՁԻ» բաժանորդագինը ամենայն տեղ տասը բուբլի է:

Հոգևորականները Կոնսիստորիայի միջնորդութեամբ, իսկ ուսուցիչները թեմական վերատեսչի պատասխանատուութեամբ կարող են մաս առ մաս վճարել, այն է:

Ստորագրելու ժամանակ—4 բուբլի, մայիսի 1-ին 3 բուբլի և սեպտեմբերի 1-ին 3 բուբլի:

Այն անձինք, որոնք միանուագ չեն կարող վճարել բաժանորդագինը դիմում են իւրեանց պայմաններով խմբագրին:

Ստորագրուել կարելի է Տփխիսում «ՓՈՐՁԻ» խմբագրատան մէջ և Կենտրոնական դրաւճառանոցում. Կ. Պոլսում՝ մեծ. Պետրոս էֆ. Վասիլեանի մօտ. Ղալաթիա Կէօղէ օղլու խան, մաքսատան դիմաց. Զմիւռնիայում՝ դեր. Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանի մօտ իսկ Ասիական Ցաճկաստանում մեծ. Լ. Մուրադեանի մօտ, Սամսօն:

18⁷⁶/₇₇, 18⁷⁷/₇₈ և 1879 թ. «ՓՈՐՁԸ» կարելի է ստանալ խմբագրատան մէջ իւրաքանչիւր շրջանի համար 10 բուբլի հատուցանելով:

Նոր բաժանորդները առաջին փոստայով ստանում են բոլոր լոյս տեսած համարները:

Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով—Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ“, իսկ արտասահմանից—Tiflis. Redaction du journal Arménien „PORDZ“.

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

на 1880 годъ, на слѣдующихъ условіяхъ:

СРОКИ.	Съ достав. въ Тифлисѣ.		Съ пересылкою иного'род,	
	Руб.	Коп.	Руб.	Коп.
На годъ	11	50	13	—
На полгода	6	—	7	—
На три мѣсяца	3	50	4	—
На одинъ мѣсяцъ	1	50	1	75

Подписка принимается въ г. Тифлисѣ, въ конторѣ газеты *Кавказъ*, на Барятинской улицѣ, въ домѣ подъ № 4. Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію газеты *Кавказъ*.

1880 թվին, Յունվար ամսից ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ կը բացվի ՊԱՆՍԻՕՆ որոյ մէջ կընդունվեն գիշերօթիկ և կիսագիշերօթիկներ 7 տարեկան հասակից: Այս ուսումնարանի նպատակն է պատրաստել երեխանցը առաջին և երկրորդ դասատան արքունական դպրոցների համար:

Տարրական ուսումնարանն ունի բաժանումն, որ անուանվում է ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ, որի մէջ ընդունվում են երեխայք 4-ից մինչև 7 տարեկան հասակը:

Օտարաքաղաքացիք պայմանները իմանալու կարող են դիմել այս հասցէով:

ТИФЛИСЪ
Басрату Мириманову
Дѣтскій садъ и элементарная школа, Вельяминовская улица д. кн. Аматуни.

Дозволено Цензурою 13 Декабря 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона